

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

Մեր շարականների հեղինակների խնդրով զբաղուելով ես յանդել էի հետեւեալ եղբակացութիւններին. ա). Ներսէս Շնորհալուց առաջ չկայ և ոչ մի աղբիւր, որ մեզ տեղեկութիւն տար հեղինակների մասին. բ). Մեր ձեռքը հասած հեղինակների ցուցակները՝ արդի տպագիր Շարականի սկզբում զետեղուած ցանկը, Գրիգոր Տաթևացու Հարցմանց գրքի Թ. հատորի 47 զլուխը, Ստեփաննոս քահանայի ոտանաւորը, ձեռագիր Շարականներից մի քանիսին կցուած տեղեկութիւնները և այլն՝ խիստ տարբերուած են իրարից՝ Ներսէս Շնորհալուց առաջ ապրած բոլոր հեղինակների (Ե—ԺԱ. դար) նկատմամբ *) և գ). Շարականների հեղինակների մասին եղած ամբողջական աւանդութիւնը ծագել է Ներսէս Շնորհալուց յետոյ և կապ ունի շարականների կանոնական զօրութիւն ստանալու հանգամանքի հետ **):

Գրական—քննադատական մեթոդին դիմելով ու մի քանի օրինակներ մէջ բերելով ես փորձել եմ նաև ապացուցանել, որ աւանդութիւնը հիմնուած ու կառուցուած չէ քննադատութեան վերայ. օրինակի համար Ս. Սահակ Պարթևին և կամ Մեսրոպ Մաշթոցին վերագրուած շարականները մի գրչի արդիւնք չեն, ***) ապա ուրեմն շարականների հեղինակների խնդիրը կարօտ է լուրջ ուսումնասիրութեան. որից յետոյ միայն թերեւ յաջողութիւն ասել, թէ ովքեր են իրօք այն ահագին քանակութեամբ շարականների հեղինակները, որոնք բոլոր աւանդութեան վերագրուած են Ե—ԺԱ. դարերի նշանաւոր եկեղեցականներին։ Սակայն գրական քննադատութիւնից առաջ շահեկան և նպատակայարմար է դեռ եւ ձեռագրերից խնամքով ժողովել և ամփոփել այն ամեն ծանօթութիւնները, որոնք վերաբերում են հեղինակների շուրջը կազմուած աւանդութեան զարգացման այլ և այլ աստիճաններին, ինչպէս և այդ գարգացման ընթացքում ծագած տարբեր կարծիքներին։ Ներկայիւս հին և նոր շարականների խնդիր յարուցանելով իմ միակ ցանկութիւնն է խօսեցնել Մայր Աթոռի մասնադարանի ամենանշանաւոր համար 1588 ձեռագիրը մի ուրիշ և որոշ տեսակէտից էլ աւելի նշանաւոր ձեռագրի՝ Տաշեանի ցուցակի 202 համարի և հե-

*) Ա. եւ Բ. եղբակացութիւնների առթիւ տես իմ՝ Prof. Dr. F. N. Finck und seine Kritik..., Edschmiatsin, 1908 աշխատութեան 9 էջը եւ Das armenische Hymnarium, Leipzig, 1905, 88—102 էջերը։

**) Das armenische Hymnarium. 84—96 էջ։

***) Անդ. 89—95։

ղինականների մասին մեզ հասած աւանդութիւնների հետ ու իմ ձեռքի տակ եղած այդ բոլոր միջոցներով գոնէ իմանալ, թէ մեր արդի կանոնական շարականներից որոնք են համարուում հին, այսինքն՝ ներսէս Շնորհալուց առաջ գրուած, և որոնք նոր՝ Շնորհալու և նորանից յետոյ ասորած հեղինականների գործ: Սոյն համար 1588 ձեռագիր Շարականը, ինչպէս որ արդէն երկու անգամ առիթ եմ ունեցել ասելու *), չի կարող գրուած լինել ԺԳ. դարի վերջերից առաջ, այլ հաւանօրէն ԺԳ.—ԺԴ դարի գործ է: Այս ձեռագրի նկարագրութիւնն արել և կարեորութիւնն առաջին անգամ չեւտել է Սահակ վարդապետ Ամատունին **), որի աշխատանքից յետոյ հաճելի է խոյս տալ կրկնութիւնից և անմիջապէս ձեռնարկել մեր գործին: Միայն վերստին յիշատակութեան արժանի է այն հանգամանքը, որ ձեռագրիս շարականներ պարունակող 1a—225a էջերը գրուած են անտարակոյս մի և նոյն ձեռքով՝ մերթ ընդարձակ և մերթ կրճատ ձևով: Մեր բազմախառ միարանակիցը շատ ճիշտ է հասկացել և բացատրել ***)) ընդարձակ և կրճատ ձևով գրելու գաղտնիքը այն իմաստով, թէ հինը գրուած է կրճատ ձևով, իսկ նորը՝ ընդարձակ: Հեմ ցանկանում առարկել, թէ ամեն գրիչ ունեցել է նաև իւր ստացողը, գուցէ կրճատ ձևով գրուած են միմիայն այն շարականները, որոնք ստացողն արդէն բերան է արել, յիշողութեան մէջ ամրագնդել, մանաւանդ որ այս դէպքում հեղինակների ցանկի (223 b—225 a) վերնագիրն է. Յաղագս Որո. թէ հին. և նոր շարականը, և երգերն Յումմէ. Ասացան:

Յարելով այս կարծիքին՝ աչքի առաջ ունենալով ամբողջ աւանդութիւնը՝ հեղինակների մասին և ստուգելնք, թէ մեր արդի շարականներից և—ԺԱ. դարերին վերագրուածներն արդեօք լիովին կան այս նշանաւոր ձեռագրում և յիրաւի կրճատ ձևով են գրի առնուած: Ինչ հետեանքի էլ հասնելու լինինք, յամենայն դէպս արժէ իմանալ, թէ ինչ է հասկացել գրիչը ԺԳ.—ԺԴ դարում նոր և հին շարական ասելով, ինչ շարականներ են երգուել այն ժամանակ, որոնք այժմ այլ ևս կանոնական չեն, երբ է վերջանում այս գրչի կարծիքով հնի շրջանը և սկսում նորինը: Ըստ պաշտօնապէս ամենահեղինակաւոր աղբիւրի՝ տպագիր Շարականին ****) կցուած ցուցակի՝ Ս. Սահակ Պարթևը գրել է «ղլաղարուն և զկարգն Աւագ շարաթուն». Տաթևացին յիշատակում է միայն «զաւագ շարաթին»:

*) Das armenische Hymnarium, էջ 84 եւ Արարատ ամսագիր, 4909. էջ 875.

**) Արարատ. 1894 թ. 85—88.

***) Անդ, էջ 87—88

****) Մեր օրինակն է Էջմիածնի 1861 թուականի տպագրութիւնը:

Ստեփաննոս երէջը՝ «Զչարչարանաց աւագ շարթին յարութենէն Ղազարոսին»։ Տաշեանի 334 համար ձեռագիրը՝ և ս^բ սահակ զաւագ շարթ»։ Նոյն ցուցակի 142 ձեռագիրը՝ «զապաշխարութեան, զՂազարու, զգալստեան, զԱւագ շարթուն, Մեսրոպ վարդապետն»։ Քարամեանցի (Բերլինի արքայականի մատենադարանի) ցուցակի 38 ձեռագիրը՝ «և ս^բ Սահակ զաւագ շարթ^նն»։ Տաշեանի 202 նշանաւոր համարի մէջ Ղազարու կանոնի առթիւ ցածում՝ լուսանցքում այլ ձեռքով գրուած է «Նէրսի ասցլ»։ Վերջապէս մեր այս 1588 ձեռագիրը հեղինակների ցանկում՝ 224 և Ս. Սահակ Պարթևի մասին յիշատակում է միայն և մի միայն հետեւելը. «Զխաչին կարգն և զեկեղեցոյն, և զձայնից բաժանումն Ս^բն սահակ պարթևին առաջ»։ Այսպիսով Ղազարու կանոնի մասին 202-ի ծանօթութիւն հիման վերայ կարող ենք մտածել, թէ յետին ժամանակի արտագրութիւն է, Շնորհալու կամ Լամբրոնացու գրուածք. և այսպէս կարծելու համար նպաստաւոր է նաև 1588-ի խորին լուծիւնն այս խնդրի մասին, մինչդեռ այս ձեռագիրը, ինչպէս մի փոքր առաջ յիշեցինք, որոշ շարականներ է վերագրում Ս. Սահակին, իսկ այս կանոնի մասին ոչ յիշատակում է ոչ էլ գոնէ 142-ի նման Ս. Մեսրոպին և կամ որ և է այլ անձի ընծայում։ Յամենայն զէպս այս աղբիւրների ստուար մեծամասնութեան վկայութեամբ Ղազարու յարութեան և Աւագ շարթու շարականները հին են, ապա ուրեմն և մեր այս ձեռագրում պէտք է գրի առնուած լինին կրճատ ձևով։

Տպագրի 225—277 էջերը՝ սկսած Ղազարու յարութեան կանոնից մինչև Մեծի Շարթու կանոնի վերջը, բաղդատելով ձեռագրի համապատասխան բաժնի՝ 100 և—125 և երեսների հետ՝ տեսնում ենք.

ա). Ղազարու յարութեան կանոնի բոլոր շարականներն էլ նոյնն են, ամբողջը գրուած է կրճատ ձևով.

բ). Գալստեան Տեառն յերուսաղէմ կանոնի մէջ բոլորն էլ կրճատ է բացի Որ ի քորեական աթոռ ընդ հօր նստէիր հրց-ից, որից առաջ 101 a ձեռագիրը պահպանել է կրճատ գրութեամբ մի այլ հրց. Որ զերիս մեկս. իհնոց. ապրէ.

գ). Ծաղկազարդի կանոնի մէջ կան արդի շարականները կրճատ ձևով, այլ և 102 a իրենց համապատասխան տեղը հ. Բաքերանեալ ես ք^ս. որ եկիր ի փր. զարար. քո... և մ. Ուրախ լեր մայր լս. քանդի. քէ. այս. ի վեր... 102 a նոյնպէս կրճատ գրութեամբ.

դ). Մեծի Երկուշաբթին կանոնի արդի շարականներից Անեղն ի հօրէ ծնեալը, Եկայք որդիք մարդկան այսօր ողբասցուք և Որ յանէից գոյացուցիք զքո զարարածսր գրուած են արձակ, իսկ մնացեալը՝ կրճատ ձևով. բացի սորանից իրենց համապատասխան

անկը արձակ գրութեամբ տեսնում ենք նաև երկու մեծացուցէ՝ որոնք այժմ այլ ևս գործածական չեն. սրբա են. Եղիմ քանաւոր ի վրտակաց հոգոյն սրբո 109 b—110 a և Արարիչն արարածոց նորագործեալ սկիզբն աշխարհի ա՞ծածին 110 a.

կ). Մեծի Երեքշաբաթին կանոնի մէջ արձակ են գրուած իմաստուն կուսանքն և Յորժամ յերկնից փառք գառ, մնացեալը՝ կրճատ. այստեղ ևս կան արձակ գրութեամբ երկու մեծացուցէ՝ որոնք այժմ անգործածական են. սրբա են. Երկինք յերկրի մարիամ, արեգականն արդարութեան աւթարան 111 a—b և Աքանչիւի բարի բանին բարձաւղ մարիամ ա՞ծածին 111 b—112 a.

դ). Մեծի Չորեքշաբաթին կանոնի մէջ արձակ են գրուած Որ յաթոռ փառաց բազմեալ և Որ խորհրդեամբ ընդ հօր և հոգւոյն. ապա հարցը՝ կրճատ, իսկ յետոյ արձակ գրութեամբ երկու այժմ անգործածական մեծացուցէ՝ Լոյսն արարչական ի չորրորդ աւուր 112 b—113 a և Որ խորհրդոցն հայրենի խորհրդարան ա՞ծածին 113 a—b. մնացեալը դարձեալ կրճատ:

է). Մեծի Հինգշաբաթին կանոնի մէջ ամբողջը գրուած է կրճատ ձևով. արձակ են՝ երկու այժմ անգործածական մեծացուցէ՝ Մայր լուսո ա՞ծածին անճառելի լուսոյն ծագման 114 a—b և ի հայրական ծոցո ծագեալ լուսոյն ելք արևու ա՞ծածին 114 b, ինչպէս և Այսօր կանգնեցաւ վերջին մի վեցերորդ տուն՝ Այսաւր մեկնեցաւ աշակերտն ի սուրբ զնդէն ի յորոշումն անձին իւրոյ 115 b, որ նոյնպէս գործածական չէ այժմ:

ը). Մեծի Ուրբաթուն կանոնի մէջ արձակ են գրուած Այսօր ի կատարումն, Այսօր զոր երկնային լուսեղինացն և այժմ անգործածական երկու մեծացուցէ՝ Ով տիրամայր տըրտմութեամբ տըխրեալ 116 a—b ու Յահել աւուրն ուրբաթուն մահուամբ մեծի կոյսորդոյն 116 b և Այսօր անճառը, Նորոգող տիեղերացն ու Աղբերացն անապականը:

թ). Մեծի Շաբաթուն կանոնի մէջ արձակ են գրուած օրհնութեան երկրորդ և երրորդ մասերը՝ Կենդանին յախտենից և կուսածին մարմնով Քրիստոս շարականները, ինչպէս և այժմ անգործածական երկու մեծացուցէ՝ Ա՞ծածին ի շնորհէն կիրք անաւրէնութեամբ 125 a և Յորժամ ի հոգ մահու իջանէր անմահ գաւրաց թաղաւորն 125 a—b.

Այս բաղդատութիւնից յետոյ տեսնենք, թէ ինչ ցուցմունքներ է անում Տաշեանի համար 202 ձեռագիրքի Սոյն ձեռագրի A հատածը 1 a—165 a, ինչպէս արդէն առիթ ենք ունեցել մի այլ անգամ ցոյց տալու *), գրեթէ անաղարտ պահպանել է Շաբականի

*) Das armenische Hymnarium, էջ 52—54 եւ 58.

կերպարանքը ներսէս Շնորհալույ առաջ, իսկ B հասածում նոյն ձևով գրի են առնուած Շնորհալու և յաջորդ հեղինակներին աշխատութիւնները:

1. Այնտեղ եւ լրիւ գրի են առնուած Ղազարու յարութեան կանոնի 8 շարականները. ուրեմն այս կանոնն ամբողջապէս հին է, այսինքն՝ ըստ 1588 ձեռագրի՝ եղել է ներսէս Շնորհալույ առաջ: Այլ ինչիւր է, որ մենք տակաւին հիմք չունինք պնդելու. թէ այս 8 շարականներն հեղինակն իրօք եղել է ինքը Ս. Սահակ Պարթևը և ոչ մի ուրիշ անձն, որ ապրել է և—ԺԱ. դարերի հարուստ ժամանակամիջոցում: Յամենայն զէպս եւ չեմ վարանում նորէն ասելու և պատրաստ եմ մի անգամ եւ արագացնելու, որ այս 8 շարականներն առ նուագն երկու հեղինակի արտադրութիւններ են, ինչպէս որ արդէն գրել եմ և հիմնաւորել զեռ տարիներ առաջ իմ անդրանիկ աշխատութեան մէջ *):

2. Գալստեան Տեառն յերուսաղէմ կանոնի մէջ վիեննայի ձեռագիրը բնաւ չունի Որ ի քրովքէական ամթու հարցը. այլ մի միայն հնազոյն Որ գերեա մանկ. ի հնոց ուղղեցուցիքը. Որ ի քրովքէականի նոր լինելուն վկայում է ոչ միայն մեր արդի Շարականին կրօնած որաշտօնական հեղինակացոյցը «Սուրբ ներսէս Շնորհալու... զծաղկազարդի հարցն» բառերով, այլ և 1588-ի Տօնացոյցն ու հարցնացոյցը՝ «Կիրակէն աւրն ծառղարդար, որ է պալուստ ա՛ն յե՛մ, շարականը իւրն, հցն նորն, և թէ ոչ Որ գերիս մանկունան» 232a, ինչպէս նաև հարածեանցի յուլյակի 38 համար ձեռագիրը՝ Տօնացոյցի մէջ յանձնարարելով՝ Մնացեալ շարականներն այնտեղ եւ կան լիովին:

3. Ծաղկազարդի կանոնն ամբողջովին հին է. 202 ձեռագրում ոչ միայն կան արդի չորս շարականներն, այլ և 1588-ի մէջ կրճատ ձևով գրի են առնուած Բարերանեալ եւ և Ուրախ լեր մայր լուսոյ, որոնք այժմ գործածութիւնից դուրս են:

4—8. Մեծի Երկուշարթին մինչև Մեծի Ուրբաթուն կանոնների շարականները բոլորն էլ կան 202 ձեռագրի A հասածում՝ բացի վերջին կանոնին յաջորդող Այսօր անճատից և նորոգող ախեղիւրայից. որոնք ներսէս Շնորհալու գրածքներն են:

9. Մեծի Շարաթուն կանոնն եւ այնտեղ լրիւ գրի է առնուած: Սակայն այս և առնասարակ վերոյիշեալ պարագաներն ապացուցանում են միայն մի բան, որ նախաներսեան չրջանի վերջում՝ ներսէս Շնորհալույ անմիջապէս առաջ կամ ԺԱ. և ԺԲ. դարերի չեմքին այս շարականներն արդէն գոյութիւն են ունեցել. իսկ թէ իրօք ում գրուածքներն են այս շարականները՝ մենք զեռ եւ չգիտենք:

*) Անդ, էջ 89—95.

Մեր արդի Շարականին կցուած հեղինակացոյցը Մեսրոպ Մաշ-
թոցին վերագրուած է «զկարգն Ապաշխարութեան»։ Նոյն կարծիքին
են նաև Տաթևացին, Ստեփաննոս քահանան, Տաշևանի 202 համար
ձեռագրի լուսանցքում գրողը, նոյն ցուցակի 336 և Քարամանցի
38 համար ձեռագիրը։ Տաշևանի 142 բացի սորանից, ինչպէս որ
արդէն վերելում յիշատակեցինք, Մեսրոպին վերագրուած է նաև
այլ շարականներ, մինչդեռ ըստ 1588-ի Մեսրոպ Մաշթոցը գրել է
Ապաշխարութեան կարգի միայն մի մասը, ողորմաները Բենիկ
վարդապետինն են, 224 ա՝ «Չապաշխարութեան» հարցներն և զո՞ր
յերկնիցներն Մեսրոպ վ՛րն ասաց, Չողորմէքն ապաշխ. Բենիկ վ՛րն
ասաց,»։ Ըստ այսմ արդի Շարականի ապաշխարութեան կարգի
կամ պահոց շարականների այն բոլոր հարցերն ու տէր երկնիցները,
որոնք գրի են առնուած 1588 ձեռագրում, այնտեղ պիտի լինին
կրճատ ձևով։

Տպագրի 117—224 էջերը, ուր մէջ ընդ մէջ զեանջուած են
պահոց ութ ձայն շարականները, բազդատելով այս 1588 ձեռա-
գրի 70 ա—82 ա էջերի հետ՝ տեսնում ենք, որ արդի շարականները
բոլորն էլ կան ձեռագրում և առանց բացառութեան գրուած են
կրճատ ձևով, միակ տարբերութիւնն է, որ տպագրի 159 էջի կո-
թատ Զանուն տեսան, ալէլուիա ալէլուիա Եւսրբոյ հոգւոյն ալէլու-
իա ալէլուիա մանկունքն այնտեղ չկայ, սորա փոխարէն 75 Ե—76 ա
գրուած է Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիայ. Այստաւ ընդ զա հա-
մաձ, միար, երգե, երկրօր, ըն, հոգեղէ, միաբան, Բացի սորանից
ձեռագրում արձակ գրութեամբ կան երկու ողորմեա և հինգ տէր
յերկնից, որոնք խորթ են տպագրին և այժմ անգործածական, ա-
ռաջիններն են՝ 72 Ե—73 ա Աւրհնեցից զանուն քո ս՛րո միայնդ ես
բարեբար, 81 ա Աստուած քաւեա զիս ըզմեղատորս Որ մաքսաւո-
րին /թողեր զբաղմութիւն... վերջիններն են, 73 ա—Ե Չքեզ աւրհ-
նեն իմանայի զաւրութեանցըն զապն, 74 ա—Ե Աւրհնեմք և բարե-
քանեմք և առաւել բարեբանեմք զանուն քո, 79 ա Տուք զփառս ա-
մենայն երկիր արարողին մերօ, 80 Ե Եկայք ժողովուրդք երկիւղիւ
երկիրպաղցուք ս՛ր երբորգութեանն, և նոյն 80 Ե Տուք զփառս
ա՛յ, ի յերկինս հրեշտակք և երկնային զաւրութիւնք...

Ապաշխարութեան կարգի արդի շարականները բոլորն էլ լրիւ
կան նաև Տաշևանի 202 ձեռագրի Ա հատածում։ Ըստ այսմ այս
շարականները հաւանօրէն բոլորն էլ հին են, ուստի և 1588-ի
այն ծանօթութիւնը, թէ «Չողորմէքն ապաշխ. Բենիկ վ՛րն ասաց»,
կամ թիւրիմացութիւն է և կամ վերաբերում է ոչ թէ ԺԳ դարում,
այլ մինչև ԺԲ դարը՝ Շնորհալուց առաջ՝ ապրած մի այլ Բենիկ
վարդապետի։

Ս. Սահակին և Մեսրոպ Մաշթոցին վերագրուած շարական-

ների առթիւ այսքան մանրամասն խօսելուց յետոյ՝ այժմ զրի առ-
նենք արդի Շարականի և 1588 ու 202 ձեռագրերի բաղդատու-
թեան միմիայն արդիւնքը՝ առանց երկար ու բարակ բացատրու-
թիւնների Գանի որ 1588 ձեռագիրը իւր հեղինակացոյցով և ար-
ձակ ու կրճատ գրութեամբ կամենում է ցոյց տալ, թէ շարական-
ներից որն է հին և որը՝ նոր. քանի որ նա յետին ժամանակի՝ օ-
րինակի համար Յակոբ Կյայեցու, Վարդան վարդապետի և նոյն
խոյն Ներսէս Շնորհալու՝ աշխատութիւնները զրի է առնում արձակ
ձեռք՝ հետաքրքրական է իմանալ, թէ մեր արդի շարականներից
ըստ այդ ժ.Գ—ժ.Դ գարի աւանդութեան որոնք են հին և որոնք՝
նոր. Այս աշխատանքը կատարելուց յետոյ մեզ կըմնայ կցել մի
ցուցակ այն բոլոր շարականների, որոնք, կրճատ թէ արձակ, գրուած
են 1588-ում, բայց այժմ անգործածական են։ Նախ առնենայն ճշգու-
թեամբ պահպաններ արդի տպագիր Շարականի դասաւորութիւնը
և մի ամբողջական պատկեր տալու նպատակով իւրաքանչիւր կա-
նոնի, շարքի և առանձին շարականի առթիւ հէնց իւր տեղն էլ յի-
շատակենք, թէ ինչ վկայութիւն է տալիս 1588 համար ձեռագրի-
րը, եթէ մի շարական այստեղ արձակ է գրուած՝ ապա ըստ այս
ձեռագրի կամ ժ.Գ—ժ.Դ գարում եղած մի աւանդութեան այդ նոր
է, իսկ եթէ կրճատ է՝ ապա ըստ նոյն 1588-ի կարծեաց և կամ
աւանդութեան հին է, այսինքն Ներսէս Շնորհալուց ասած արդէն
եղել է։

կը շարունակուի.

Ներսէս վարդապետ Տէր-Միքայէլեան

ՆԵՐՍԷՍ Ե. ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Կովկասեան Թեմական սեղեկագիրը (1885 թ. № 18)
հետաքրքիր սեղեկութիւններ է տալիս 1845 թ. Ներսէս
Ե-րդ Կաթողիկոսի Սաւրօպօլ այցելութեան մասին։

Ռուսաց երեմիա եպիսկոպոսը գրում է.—

«1845 թ. Սեպտեմբերի 5-ին Կիշենեովից Ս. Էջմիածին
գնալիս Սաւրօպօլ այցելեց Հայոց եկեղեցւոյ պատրիարք Ներ-
սէսը, մի յարգարժան, համարեա ութսունամեայ, մարմնով ա-
ռողջ և հոգւով արի ծերունի, որի անձնաւորութիւնը, առաւելա-
նը և գիրքը ամեն մի բարեհոգի ռուս անձնաւորութեան սրտի
մէջ առաջ է բերում ակնածութեան զգացմունք։

Ս.մոյս 6-ին, Թագաւոր Կայսեր անուանակոչութեան
օրը, նորին Սրբութիւնը, իւր եկեղեցւում եղած Հայոց ժա-